



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2 սեպտեմբերի 2016 թվականի N 898 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ՝ ՆԱԽԿԻՆՈՒՄ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻՑ ԴՈՒՐՍ, ՄԱՐԶԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻ՝ ԱՐՈՏՆԵՐԻ ԵՎ ԽՈՏՀԱՐՔՆԵՐԻ (ԲՆԱԿԱՆ ԿԵՐԱՀԱՆԴԱԿՆԵՐ) 2016 ԹՎԱԿԱՆԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԳՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ պարբերությանը և «Հողի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական սահմաններում ընդգրկված՝ նախկինում համայնքների վարչական սահմաններից դուրս, մարզերի վարչական սահմաններում գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի՝ արոտների և խոտհարքների (բնական կերահանդակներ) 2016 թվականի կադաստրային գները՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 15-օրյա ժամկետում կազմել Հայաստանի Հանրապետության համայնք-

ների վարչական սահմաններում ընդգրկված հողերի՝ բնական կերահանդակների (արոտներ և խոտհարքներ) կադաստրային գնահատման քարտեզները և տեղեկագրերը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

2016 թ. սեպտեմբերի 6
Երևան



Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Հավելված
ՀՀ կառավարության 2016 թվականի
սեպտեմբերի 2-ի N 898 - Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ
ԸՆԴԳՐԿՎԱԾ՝ ՆԱԽԿԻՆՈՒՄ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻՑ ԴՈՒՐՄ,
ՄԱՐԶԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱ-
ԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻ՝ ԱՐՈՏՆԵՐԻ ԵՎ ԽՈՏՀԱՐՔՆԵՐԻ (ԲՆԱԿԱՆ ԿԵՐԱՀԱՆԴԱԿՆԵՐ)
2016 ԹՎԱԿԱՆԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԳՆԵՐԸ

(հազ.դրամ/հա)

NN ը/կ	Գնահատման շրջանները	Գնահատման խմբերը	Բնական կերտահանդակներ	
			խտտաք	արոտ
			գինը	գինը
1.	Կիսաանապատային A	I	378.0	288.0
		II	294.0	224.0
		III	210.0	160.0
		IV	126.0	96.0
		V	42.0	32.0
2.	Տափաստանային B	I	450.0	360.0
		II	350.0	280.0
		III	250.0	200.0
		IV	150.0	120.0
		V	50.0	40.0
3.	Մարգագետնա- տափաստանային V	I	788.0	612.0
		II	613.0	476.0
		III	438.0	340.0
		IV	263.0	204.0
		V	88.0	68.0
4.	Անտառամարգագետնային G	I	918.0	693.0
		II	714.0	539.0
		III	510.0	385.0
		IV	306.0	231.0
		V	102.0	77.0
5.	Ենթալայան D	I	981.0	788.0
		II	763.0	613.0
		III	545.0	438.0
		IV	327.0	263.0
		V	109.0	88.0
6.	Ալպյան E	I	761.0	612.0
		II	592.0	476.0
		III	423.0	340.0
		IV	254.0	204.0
		V	85.0	68.0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ



Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ